ոտաթաթը. կարում են մինչև ծնկները կտաւից, որի ծայրերին ապա կարում են երկրորդական վերջաւորութիւններ մթխալից, ղանաուզից, մահմառից, քեճից կամ շիլայից. կուրծքը մինչև պորտը բաց է, կոճկւում է կոկորդի տակ արծաթեայ մի ղուանանոցով. թևերը լայն են և երկար, կարւած է մինչև արմունկը, ապա բաց է և կոճկւում է դաստակի վրայ. լւանում են 2 կամ 3 շաբաթը մի անգամ:

Վ ա ր տ ի կ (թ մ բ ա ն): Կարում են մինչև ծնկները կտաւից, ապա նրա ծայրերին միացնում են երկրորդական վերջաւորութիւններ քեճից, ղանաուզից կամ մահմառից, որ հասնում է մինչև ոտաթաթը. կապում են փորի վրայից ոլորած պարանով:

Ա ր խ ա լ ո ւ ղ: Հագնում են շապկի վրայից, որ հասնում է մինչև ծնկները. կարում են՝ հարուստները ղալամքարից, իսկ աղքատները Ալուգերտի և Խոմարի չթից: Ունի մինչև դաստակը հասնող թևեր, որ մինչև արմունկը կարւած է, ապա կոճկւում է դաստակի վրայ: Կուրծքն եռանկիւնաձև բացւած է:

Գ օ տ ի: Մէջքին կապում են գօտի, որ փաթաթում են արխալուղի կամ միթանի վրայից. պատրաստում են կարմիր ներկած բրդից, որն ունի 2—3 արշին երկարութիւն և քառորդ արշին լայնութիւն. երկու անգամ փաթաթում են մէջքին, յետոյ առջևում մի հանգոյց ձգում և ապա ծայրերը քաշում են գօտու մէջ:

Մ ի թ ա ն: Հագնում են արխալուղի վրայից. հասնում է մինչև ծնկները. կարում են ամերիկական կամ ռուսական չթից (սպիտակ, կարմիր կամ կապոյտ), սպիտակ կտաւէ աստառով:

Կ ա ր մ ի ր զ ո զ ն ո ց: Հագնում են միթանի կամ արխալուղի վրայից, որի վերի մասը կապում են վզի ետևից, որ այդտեղից հասնում է մինչև սրունքները, իսկ ցածից կապում են պորտի վրայ. կարում են շիլայից, ղանաուզից, քեճից ու մահմառից. թևեր չունի: